

Կարծիք

Լուսինե Եղիազարի Ղազարյանի «Ակտիվների կառավարման հիմնախնդիրները ՀՀ ապահովագրական ընկերություններում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.03. «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ապահովագրական ընկերությունները յուրաքանչյուր տնտեսության, հատկապես ֆինանսական հատվածի կարևորագույն ինստիտուտներից են, որոնք շուկայական միջավայրում ունակ են դրսևորելու ճկունություն սպառողների պահանջների, տեխնոլոգիական ու տնտեսական միջավայրի փոփոխությունների նկատմամբ: Ապահովագրական ընկերություններին բնորոշ է բարդ դրամական շրջանառությունը, քանի որ վերջիններս ապահովագրավճարների տեսքով ստանձնելով ապահովագրական ռիսկեր, հատուցումներ իրականացնում են ապագայում՝ ոչ հստակ ժամանակահատվածում, անորոշ ծավալներով ու չափերով: Այս առանձնահատկությամբ է պայմանավորված ապահովագրական ընկերությունների ակտիվների կառավարման՝ որպես կազմակերպության ֆինանսական կայունության, վճարունակության և շահութաբերության ապահովման առանցքային գործիքի ռազմավարական նշանակությունը:

Համաշխարհային տնտեսությունում կյանքի և ոչ կյանքի ապահովագրական ընկերությունները, իբրև խոշոր ֆինանսական միջնորդներ և ինստիտուցիոնալ ներդրողներ, ապահովում են երկարաժամկետ կապիտալի զգալի հոսք՝ էական դեր խաղալով արժեթղթերի շուկայի զարգացման և մակրոտնտեսական կայունության ապահովման գործում: Այս տեսանկյունից, ապահովագրական ընկերությունների ակտիվների կառուցվածքն ու դրանց կառավարման արդյունավետությունը կարևոր նշանակություն ունեն ոչ միայն որոշակի ընկերությունների ֆինանսական կայունության, այլև բոլոր երկրների ֆինանսական համակարգերի հավասարակշռված զարգացման համար:

Ապահովագրական ընկերություններում ակտիվների կառավարման գործընթացը բազմաշերտ է՝ ընդգրկելով ոչ միայն ներդրումային պորտֆելի ձևավորումն ու կառավարումը, այլև

դեբիտորական պարտքերի, մարդկային ռեսուրսների, ոչ նյութական և այլ ակտիվների արդյունավետ կառավարումը:

Հայաստանի ապահովագրական շուկայում հատկապես կամավոր ապահովագրության տեսակներով, սուր է արտահայտված դեբիտորական պարտքերի կառավարման հիմնախնդիրը: Մի շարք ապահովագրական ընկերությունների հաշվեկշռում դրանց տեսակարար կշիռը կազմում է ակտիվների գրեթե 25-30%-ը, ինչը բացասաբար է անդրադառնում իրացվելիության մակարդակի, ֆինանսական հոսքերի շրջանառության և շահութաբերության վրա:

Միաժամանակ, հայաստանյան ապահովագրական շուկային բնորոշ է պահպանողական ներդրումային քաղաքականությունը, որը պայմանավորված է արժեթղթերի շուկայի սահմանափակ զարգացմամբ, ներդրումային գործիքների սակավությամբ, ՀՀ կենտրոնական բանկի կողմից կիրառվող սահմանափակումներով, ինչպես նաև ապահովագրական մշակույթի և վստահության ոչ բավարար մակարդակով: Նշված պայմաններում ապահովագրական ընկերությունների ակտիվների կառավարման արդյունավետության բարձրացումը պահանջում է գիտականորեն հիմնավորված քանակական և մաթեմատիկական մոտեցումների կիրառում:

Միջազգային փորձը վկայում է, որ զարգացած ապահովագրական շուկաներում ակտիվների կառավարման արդյունավետ մոդելները հիմնված են ռիսկ-եկամտաբերություն հարաբերակցության օպտիմալացման, դիվերսիֆիկացման և կարգավորող պահանջների համադրման վրա:

Ինչ վերաբերում է հայաստանյան փորձին, ապա սակավաթիվ են ապահովագրական ընկերությունների ակտիվների, մասնավորապես՝ ներդրումային պորտֆելի և դեբիտորական պարտքերի կառավարման քանակական մոդելների վերաբերյալ խորքային ուսումնասիրությունները: Նույն կերպ, դեռևս իրականացված չէ միջազգային փորձի ամբողջական հարմարեցում տեղական շուկայի պայմաններին: Նշված հանգամանքներն էլ պայմանավորում են ընտրված թեմայի գիտական և գործնական արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Ատենախոսության նպատակը ՀՀ ապահովագրական շուկայի օրինակով ակտիվների կառավարման արդյունավետության բարձրացման հնարավորությունների ուսումնասիրությունն է, ինչպես նաև ապահովագրական ակտիվների կառավարման ժամանակակից գործիքների, այդ թվում՝ ներդրումային պորտֆելի օպտիմալացման, դեբիտորական պարտքերի կառավարման և մարդկային

ոեսուրսների արդյունավետության գնահատման մեթոդների մշակումը: Հետազոտության նպատակն է ձևավորել գործնականորեն կիրառելի մեխանիզմներ և մոդելներ, որոնք կօգնեն ապահովագրական ընկերություններին՝

- բարձրացնել ակտիվների եկամտաբերության մակարդակը,
- ապահովել ֆինանսական կայունություն և իրացվելիություն,
- հիմքեր ստեղծել ապահովագրական շուկայում ապահովագրական պորտֆելի

կառավարման նորարարական գործիքների ներդրման համար:

Թվարկված նպատակին հասնելու համար ատենախոսության շրջանակում սահմանվել են հետևյալ հիմնական խնդիրները՝

➤ բացահայտել ապահովագրական ընկերությունների ակտիվների կառավարման տեսական և մեթոդաբանական հիմքերը,

➤ վերլուծել ՀՀ ապահովագրական շուկայի ակտիվների կազմը, կառուցվածքն ու դինամիկան, ինչպես նաև բնութագրել առկա խնդիրներն ու սահմանափակումները,

➤ հետազոտել ՀՀ ապահովագրական շուկայում ակտիվների կառավարման մեխանիզմները և միտումները, գնահատել դրանց ազդեցությունն ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության վրա,

➤ ըստ համեմատական վերլուծության՝ ուսումնասիրել ակտիվների կառավարման միջազգային լավագույն փորձը և դրա տեղայնացման հնարավորությունը ՀՀ ապահովագրական շուկայում,

➤ ներկայացնել գիտական և գործնական առաջարկություններ՝ ուղղված ՀՀ ապահովագրական շուկայի զարգացմանը և ակտիվների կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Նշված խնդիրների լուծումը հնարավորություն կտա ՀՀ ապահովագրական ընկերություններում բարելավել ակտիվների կառավարման գործընթացը, բարձրացնել ֆինանսական կայունության, ռիսկերի կառավարման և շուկայում մրցունակության մակարդակը:

Հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտը ՀՀ ապահովագրական համակարգն է, իսկ առարկան՝ ՀՀ ապահովագրական ընկերությունների ակտիվների կառավարման հիմնախնդիրների ուսումնասիրությունն ու այս առումով ռազմավարական լավագույն ուղիների առաջադրումը:

Ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսության շրջանակում կատարված հետազոտություններն ու վերլուծությունները հանգեցրել են մի շարք արդյունքների, որոնցից ատենախոսության հեղինակը որպես գիտական նորույթ պարունակող՝ առանձնացրել է հետևյալները.

➤ Տնտեսաչափական մեթոդների կիրառմամբ գնահատվել են ապահովագրական ընկերության շահութաբերության վրա դեբիտորական պարտքերի ինտենսիվության ցուցանիշների ազդեցության ուղղությունը, չափն ու որակը:

➤ ՀՀ ապահովագրական ընկերությունների համար առաջարկվել են միջազգային փորձում կիրառվող՝ դեբիտորական պարտքերի կառավարման լիմիտային և սև ցանկի մոդելներ՝ նշելով դրանց տեղայնացման «ճանապարհային քարտեզը»: Ըստ առաջին մոդելի՝ սահմանվում են գործակալների և ապահովադիրների պարտավորությունների առավելագույն սահմանաչափերը, իսկ ըստ երկրորդի՝ բացահայտվում և արգելափակվում բարձր ռիսկայնություն ունեցող պարտատերերը՝ նպաստելով դրամական հոսքերի կայունացմանը:

➤ ՀՀ ապահովագրական շուկայում գործող ընկերությունների համար մշակվել է ակտիվների օպտիմալ պորտֆելի ընտրության մաթեմատիկական մոդել՝ հիմնված Մարկովիցի պորտֆելային տեսության վրա և հարմարեցված ՀՀ կենտրոնական բանկի սահմանափակումներին և տեղական շուկայի պայմաններին:

➤ Մշակվել է ապահովագրական սքոր համակարգի հայեցակարգ, որն օգտագործվում է ապահովագրական ընկերության ապահովագրական պորտֆելի որակի և ռիսկայնության գնահատման, ինչպես նաև ակտիվների կառավարման արդյունավետության բարձրացման համար:

➤ Առաջարկվել է ապահովագրական ընկերության հուսալիության ՔԱՌԱՄԵԼՍ գնահատականի ձևավորման մեթոդաբանական նոր մոտեցում, որի շրջանակում փորձ է արվել բացահայտելու ակտիվների որակի դերը և ազդեցությունը ապահովագրական ընկերության հուսալիության վրա:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության հիմնական նպատակը, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, աշխատանքի տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված հիմնական արդյունքները, ինչպես նաև ատենախոսության արդյունքների գիտական և գործնական կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Ակտիվների կառավարման տեսամեթոդական հիմքերը» գլխում ուսումնասիրվել են ակտիվ հասկացության էությունն ըստ հաշվապահական և տնտեսագիտական մոտեցումների, ակտիվների դասակարգումն ըստ կազմի, իրացվելիության, օգտագործման և տնտեսական նշանակության՝ ներառյալ ֆինանսական, նյութական, ոչ նյութական ակտիվները և մարդկային ռեսուրսները: Իրականացվել է ապահովագրական ընկերությունների ակտիվների կազմի և կառուցվածքի համեմատական վերլուծություն ինչպես հայաստանյան, այնպես էլ այլ երկրների ապահովագրական շուկաների օրինակով: Առանձնացվել են կյանքի և ոչ կյանքի ապահովագրական ընկերությունների ակտիվների կառավարման ռազմավարական տարբերությունները: Քննարկվել են ապահովագրական շուկայի զարգացման աստիճանից բխող տարբեր ներդրումային պորտֆելների ձևավորման մոտեցումները, ինչպես նաև ներդրումային քաղաքականության քանակական և որակի հիման վրա հիմնված կարգավորման մոդելները: Ամփոփվել են ապահովագրական ընկերությունների ակտիվների կառավարման հիմնական ուղղությունները՝ հիմնավորելով դրանց ռազմավարական նշանակությունը ընկերությունների ֆինանսական կայունության և երկարաժամկետ զարգացման ապահովման գործում:

Ատենախոսության երկրորդ՝ «Ակտիվների կառավարման ուղղությունների արդյունավետության գնահատումը ՀՀ ապահովագրական ընկերություններում» գլխում իրականացվել են ապահովագրական ընկերությունների ակտիվների կազմի, կառուցվածքի և դինամիկայի վերլուծություն: Առանձին ենթաբաժնում ուսումնասիրվել է դեբիտորական պարտքերի կառավարման արդյունավետությունը՝ գնահատելով դեբիտորական պարտքերի ստորև բերված ինտենսիվության ցուցանիշների ազդեցությունը ընկերության ակտիվների շահութաբերության վրա: Ստացված արդյունքների հիման վրա առաջարկվել է ապահովագրական ընկերություններում կիրառել դեբիտորական պարտքերի կառավարման լիմիտային և «սև ցանկի» մոդելներ, որոնք թույլ

կտան սահմանել ապահովագրական միջնորդների և ապահովադիրների պարտավորությունների առավելագույն թույլատրելի մակարդակները, ինչպես նաև սահմանափակել բարձր ռիսկայնություն ունեցող պարտատերերի հետ գործարքները՝ նպաստելով դրամական հոսքերի կայունացմանը և ֆինանսական արդյունավետության բարձրացմանը:

Ատենախոսության երրորդ՝ «Ակտիվների օպտիմալ կառավարման ժամանակակից մոդելների ներդրման հնարավորությունները ՀՀ ապահովագրական ընկերություններում» գլխում ուսումնասիրվել են ակտիվների կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված ժամանակակից մոդելների կիրառման հնարավորությունները ՀՀ ապահովագրական շուկայում: Ձևակերպվել է ապահովագրական ընկերության ներդրումային պորտֆելի օպտիմալացման մաթեմատիկական մոդել՝ նպատակ ունենալով առավելագույնացնել պորտֆելի շահույթը՝ սահմանափակ ռիսկի պայմաններում: Մոդելում հաշվի են առնվել ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգավորիչ պահանջներն ու սահմանափակումները: Առաջարկվել է ապահովագրական սբորի գնահատման մեխանիզմ՝ հիմնված զույգ առ զույգ համեմատման փորձագիտական մեթոդի վրա: Գլխի վերջին մասում մշակվել է ապահովագրական ընկերության հուսալիության գնահատման ՔԱՌԱՄԵԼՍ ցուցանիշի նոր մեթոդաբանական մոտեցում, որը հնարավորություն կտա առավել ճշգրիտ գնահատել ակտիվների կառավարման ազդեցությունն ապահովագրական ընկերության ֆինանսական կայունության վրա:

Աշխատանքի արդյունքների հիման վրա ներկայացվել են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Կատարված ատենախոսությունը զերծ չէ որոշ թերություններից և բացթողումներից, որոնցից կարևորվել են հետևյալները.

1. ՀՀ ապահովագրական շուկայի ակտիվների կառուցվածքի վերլուծությունը համաշխարհային ապահովագրական շուկայի հետ համեմատության մեջ ցանկալի էր իրականացնել նաև առանձին ապահովագրական կազմակերպությունների, մասնավորապես միջազգային խոշոր ապահովագրական ընկերությունների օրինակով՝ վերհանելով միջազգային շուկայի ներդրումային և կարգավորող հիմնախնդիրները:

2. Ատենախոսի առաջարկած՝ ՔԱՌԱՄԵԼՍ-ի գնահատման նոր մեթոդաբանության կիրառումն անշուշտ առավել արդյունավետ կարող է բնութագրել ապահովագրական ընկերությունների ֆինանսական վիճակը, սակայն նոր մոդելի կամ մեթոդաբանության առաջարկումից առաջ ցանկալի էր գնահատել գործող ՔԱՌԱՄԵԼՍ համակարգի պրակտիկ կիրառությունը, քանի որ ներկայում այն ապահովագրական ընկերությունների համար կրում է տեղեկատվության ստացման բնույթ և գործնական հետևանքներ չունենալու պարագայում փաստացի վեր է ածվել անարդյունավետ գործիքի՝ չստիպելով ընկերություններին պատշաճ ուշադրություն դարձնել ՔԱՌԱՄԵԼՍ-ի գնահատականին և իրականացնել համապատասխան գործողություններ՝ դրանք բարելավելու ուղղությամբ:

3. Ատենախոսը ակտիվների կառավարման արդյունավետությունը դիտարկող համալիր գործոնների շարքում ներդրումային գործոնետության և դեբիտորական պարտքերի կառավարումից բացի անդրադարձել է նաև մադրկային ռեսուրսների կառավարմանը: Աշխատանքն առավել կշահեր, եթե այդ համատեքստում քննարկվեր նաև արհեստական բանականության դերը ապահովագրական ընկերությունների մի շարք գործառույթների (այդ թվում՝ վաճառքների իրականացում, հատուցման գործընթացների կազմակերպում և այլն) կազմակերպման ու կառավարման գործում:

4. Դեբիտորական պարտքերի կառավարման արդյունավետության բարձրացման շրջանակներում ատենախոսն առաջարկում է կիրառել լիմիտային և սև ցանկի մոդելներ: Ընդունելով գաղափարը՝ ադուհանդերձ հարկ է նկատել, որ ՀՀ ապահովագրական շուկայի գերակշիռ մասն ԱՊՊԱ (42%) և Առողջության կամ Բժշկական (30%) ապահովագրության գծով հավաքագրված ապահովագրավճարներն են, որոնցից առաջինով դեբիտորական պարտքերի առաջացման ռիսկն էականորեն պակաս է, քանի որ ապահովագրավճարները զանձվում են անմիջապես պայմանագրի կնքմանը զուգահեռ, իսկ առողջության ապահովագրության ծավալները, երկրում Համընդհանուր առողջության ապահովագրության համակարգի ներդրմամբ պայմանավորված, զգալիորեն կրճատման միտում ունեն: Հետևաբար նման գործիքների ներդրմանը պետք է «զգուշորեն» մոտենալ, որպեսզի սև ցուցակների և լիմիտավորման մոդելների կիրառումը չնպաստի շուկայում ապահովագրավճարների ծավալների կրճատմանը:

Եզրակացություն

Ներկայացված դիտողությունները ատենախոսության գիտական արժեքը և հետազոտության ընթացքում ստացված արդյունքների նշանակությունը չեն նսեմացնում:

Լուսինե Եղիազարի Ղազարյանի «Ակտիվների կառավարման հիմնախնդիրները ՀՀ ապահովագրական ընկերություններում» թեմայով ատենախոսությունն ինքնուրույն գիտական աշխատանք է, որով ստացված արդյունքները կարող են նպաստել ՀՀ ապահովագրական ընկերություններում ակտիվների կառավարման արդյունավետության բարձրացմանը, ներդրումային պորտֆելի օպտիմալացմանը, հետևաբար նաև ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության ամրապնդմանը:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի տպագրված 9 գիտական հոդվածներում: Հոդվածները ներկայացված են սեղմագրում:

Առաքված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության հիմնական բովանդակությանը և արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Լուսինե Եղիազարի Ղազարյանի «Ակտիվների կառավարման հիմնախնդիրները ՀՀ ապահովագրական ընկերություններում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.03. «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝

«Արմենիա Ինշուրանս» ԱՄՊԸ գլխավոր տնօրեն,

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ԱՐՄԱՆ ՍԱՍՈՒՆԻ ԴԱՂՈՒՆՅԻ

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

«Արմենիա Ինշուրանս» ԱՄՊԸ

Անձնակազմի կառավարման պատասխանատու՝



Ա. Ղազարյան

Ս. Ղարիբյան

«20» մարտի 2026թ.